

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Արտաշատ

17.03.16թ.

Ժամը 14:00

Մասնակցությամբ Արարատի մի շարք համայնքների երիտասարդական միության
պետական և ոչ պետական սեկտորի ներկայացուցիչների

Նիստը վարում էր փոխմարզպետ պ-ն Ի. Շաղյանը

Համայնքի ներկայացուցիչները ներկայացնում էին համայնքներում առկա հրատապ և ոչ
հրատապ խնդիրները: Փոխմարզպետ պ-ն Շաղյանը շեշտադրում էր և կարևորում էր
խնդիրների կարևորությունը:

Այգեզարդ գյուղի ներկայացուցիչը բարձրացրեց տրանսպորտի խնդիրը: Գյուղում առկա
է գյուղամիջյան ճանապարհի խնդիրը: Ճանապարհի ոչ շահագործման ենթակա լինելու
պատճառով տրանսպորտային միջոցները չեն սպասարկում գյուղին: Գյուղի
բնակիչները ստիպված են դուրս գալ գյուղից նոր ճանապարհ՝ տրանսպորտային
միջոցներից օգտվելու համար: Փոխմարզպետը խոստացավ ուսումնասիրել այդ խնդիրը
և տալ հնարավոր լուծում:

Փոխմարզպետն առաջարկեց նաև Այգեզարդ գյուղում կազմակերպել «Ծիրանի տոն»
գրոսաշրջկների համար:

Արարատ գյուղի ներկայացուցիչը, ինչպես նախորդ նիստի ժամանակ, այս անգամ ևս
բարձրացրեց սպորտ դպրոցի կառուցման հարցը: Համայնքային բյուջեից տրամադրում
են անհրաժեշտ գումարի մեծ մասը , պակասում է միայն 15.000.000դրամ:

Արարատ գյուղում առավել հրատապ է մշակույթի տան վերանորոգումը: Այգեզարդ
գյուղում նույնպես մշակույթի տունը ունի վերանորոգման կարիք:

Մարզում վերանորոգման կարիք ունեն 43 դպրոց: Այս տարի վերակառուցվելու է Նոր
Խարբերդի N° միջն. դպրոցը:

Անցած տարում Այնթափ գյուղում համայնքային բյուջեից 70.000.000 ներդրում է կատարվել մշակույթի տան կառուցման համար: Այս տարի ևս 60.000.000 ներդրում է արվել շենքը լիովին կառուցելու համար:

Նոր Խարբերդի գյուղապետ Կ. Կակոյանը 450 մեքենա հող է տրամադրել սեփական բյուջեից 2.500.000 ֆուտբոլի դաշտ կառուցելու համար:

Հնչեց առաջարկ Վեդիի գեղարվեստի դպրոցում կազմակերպել «<100 դուռ>> նախագծի ցուցահանդեսը: Փոխմարզպետը խոստացավ աջակցել և իրականացնել այդ ցուցահանդեսը:

Վերին Արտաշատի ներկայացուցիչը նշեց, որ խնդիրները նախորդ տարիների համեմատ շատացել են: Երիտասարդների 70% զբաղված է խաղողի մշակմամբ: Երիտասարդները սկսել են արտագաղթել: Հ. Բերբերյանը կարծիք է հայտնել, որ խաղողի առավելագույն արժեքը կլինի 100 դրամ:

Իսկ գյուղացին կատարել է հաշվարկներ և ինչպես նշեցին սեղանի սորտի արժեքը կազմում է 120-126դրամ, իսկ տեխնիկական սորտի արժեքը՝ 92-94:

Նիստը եզրափակեց փոխմարզպետ պ-ն Շադյանը ասելով՝ գյուղացին պետք է պաշտպանվի:

Նիստը արձանագրեց Ս. Վարդանյանը